

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «նրա տեղակալների,» բառերից հետո լրացնել «խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի,» բառերը:

Հոդված 2. Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի.

1) 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14) որոշում է ընդունում Երևանի ենթակայության կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, կանոնադրության կամ դրա փոփոխությունների հաստատման, ինչպես նաև այլ կազմակերպություններում Երևանի մասնակցության և այդ մասնակցության դադարեցման մասին:»

2) 15-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15) որոշում է ընդունում հիմնարկի կարգավիճակ ունեցող Երևանի ենթակայության կազմակերպությունների կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի վերաբերյալ:»

Հոդված 3. Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 48.1-ին հոդվածով.

«ՀՈԴՎԱԾ 48.1. Երևանի գլխավոր ճարտարապետը

«1. Երևանն ունի Երևանի գլխավոր ճարտարապետ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը:

2. Երևանի գլխավոր ճարտարապետը կարող է ունենալ օգնական, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը:»

Հոդված 4. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը «վարչական շրջանների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի,» բառերով:

Հոդված 5. Օրենքի 51-րդ հոդվածի 3-րդ մասում.

1) «կառուցվածքային» բառից հետո լրացնել «(վարչություն, քարտուղարություն, բաժին)», «առանձնացված» բառից հետո՝ «(վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմ, բաժին, ծառայություն և այլն)» բառերը.

2) հանել երկրորդ նախադասությունը:

Հոդված 6. Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) առաջարկություններ՝ Երևանի ենթակայության կազմակերպությունների ստեղծման, վերակազմակերպման, լուծարման, կանոնադրության կամ դրա փոփոխությունների հաստատման, ինչպես նաև այլ կազմակերպություններում Երևանի մասնակցության դադարեցման մասին.»:

Հոդված 7. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը:

Հոդված 8. Օրենքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «քաղաքապետարանի աշխատակազմի և» բառերից հետո լրացնել «հիմնարկի կարգավիճակ ունեցող» բառերը, իսկ «ենթակայության» բառից հետո լրացնել «այլ» բառը:

Հոդված 9. Օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) քաղաքապետին է ներկայացնում իր աշխատակազմի կանոնադրությունը.»

Հոդված 10. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկություն	Եզրակացություն
1	<p style="text-align: center;">ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ. Նաղդալյան</p>	<p>Առաջարկում եմ լրամշակել «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածը՝ առաջարկվող լրացումը տեղափոխելով օրենքի 11-րդ հոդվածով սահմանված՝ համայնքի ավագանու գործունեության կազմակերպման հիմնական դրույթներից հետո:</p>	<p>Ընդունվել է, առաջարկվող լրացումը տեղափոխվել է 11-րդ հոդվածի 3-րդ մասից հետո:</p>
2	<p style="text-align: center;">ՀՀ կառավարություն</p>	<p>«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում (այսուհետ՝ օրենք) փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում առաջարկվում է լրացնել նոր 3-րդ և 4-րդ հոդվածներ՝ հետևյալ խմբագրությամբ՝</p> <p style="text-align: center;">ՀՈԴՎԱԾ 3 «ՀՈԴՎԱԾ 48.1. Երևանի գլխավոր ճարտարապետը</p> <p>«1. Երևանն ունի Երևանի գլխավոր ճարտարապետ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քաղաքապետը:</p> <p>2. Երևանի գլխավոր ճարտարապետը կարող է ունենալ օգնական, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում</p>	<p>Ընդունվել է, նախագիծը լրացվել է նոր 3-րդ և 4-րդ հոդվածներով՝ համապատասխանաբար փոփոխելով հաջորդ հոդվածների համարակալումը: Միաժամանակ, առաջարկության ընդունման կապակցությամբ համապատասխան փոփոխություն է կատարվել նաև «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքում</p>

		<p>է քաղաքապետը»:</p> <p>ՀՈԴՎԱԾ 4. Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասը «վարչական շրջանների ղեկավարների,» բառերից հետո լրացնել «Երևանի գլխավոր ճարտարապետի,» բառերով:</p>	
		<p>«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում հոդվածների առանձին-առանձին թվարկելու փոխարեն՝ մեկ ընդհանուր դրույթով սահմանել, որ «համայնքի ղեկավարի աշխատակազմ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «աշխատակազմ» բառով՝ համապատասխան հոլովածներով:</p>	<p>Ընդունվել է, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 4-րդ և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածներում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

